ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԱՅԱՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ 33 ԵՎ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը վերսկսելու մասին առաջարկությունը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴԱՈ-256 աշխատակարգային որոշմամբ «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցվել է մինչև կասեցման հիմքերը վերանալը:

Սահմանադրական դատարանն ստացել է վերոհիշյալ գործով պահանջված լրացուցիչ ապացույցները և դրանց ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու հիմքերը վերացել են:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը վերսկսել:

2. Սույն գործի դատաքննությունը նշանակել 2022 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 11.00-ին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

13 դեկտեմբերի 2022 թվականի
ՍԴԱՈ-204